

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՁԵԿՈՒՅՑ

Մարդու իրավունքների տուն
Երևան

Երևան, 2019 թ.



Բովանդակություն

Նախաբան	3
1. Կին իրավապաշտպաններն ատելության խոսքի թիրախ	4
1.1. Ատելության նոր ալիք կին իրավապաշտպան Լարա Ահարոնեանի դեմ	4
1.2. «Իմ մարմինն անձնական է» գրքի շնորհանդեսի տապալումը կին իրավապաշտպանների դեմ արշավի համատեքստում	5
1.3. Չարուհի Մեջլումյանն ատելության խոսքի թիրախում ցմահ դատապարտյալների խնդիրների վերհանման իր պայքարում	6
2. ԼԳԲՏԻ անձանց շահերի պաշտպանները՝ ատելության ու բռնության սպառնալիքի թիրախ	8
2.1. Լիլիթ Մարտիրոսյանի դեմ ոտնձգություններն ու իրավունքի ոտնահարումները	8
2.1.1. Լիլիթ Մարտիրոսյանի ելույթն ԱԺ-ում ու դրան հաջորդած ատելության ալիքը	8
2.1.2. Բողոքի ցույցեր՝ ընդդեմ Լիլիթ Մարտիրոսյանի ելույթի	10
2.1.3. Ներպետական և միջազգային անդրադարձը Լիլիթ Մարտիրոսյանի ելույթին հաջորդած իրադարձությունների վերաբերյալ	11
3. Արշավ քաղաքացիական հասարակության դեմ	13
3.1. Ապատեղեկատվություն և կեղծ մեղադրանքներ Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի դեմ	13
3.2. Բողոքի ակցիաներ Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի գրասենյակի դիմաց	14
4. Դատական գործեր և առցանց հետապնդում ընդդեմ բնապահպան-ակտիվիստների	16
4.1. Ապօրինի ոտնձգություն բնապահպան-իրավապաշտպան Աննա Շահնազարյանի դեմ	17
5. Ատելության խոսք և սպառնալիքներ՝ ուղղված փաստաբանների դեմ	19
5.1. Փաստաբան Արսեն Մկրտչյանի նկատմամբ ճնշումները, գործունությունը խոչընդոտելու ու վիրավորանք հասցնելու դեպքերը	19
Հղումներ	21

Մարդու իրավունքների տուն Երևանն իր խորին շնորհակալությունն է հայտնում զեկույցի կազմման համար հարցազրույցներին մասնակցած անձանց՝ Արսեն Մկրտչյանին (փաստաբան), Տաթևիկ Աղաբեկյանին (Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն), Գոհար Շահնազարյանին («Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ), Լարիսա Մինասյանին (Բաց հասարակության հիմնադրամեր-Հայաստան), Մամիկոն Հովսեփյանին («Փինք» իրավապաշտպան ՀԿ) և Չարուհի Մեջլումյանին (լրագրող-փաստաբան)՝ փորձագիտական գնահատականների ու տեղեկատվության տրամադրման համար:

Նախաբան

2019 թվականի առաջին վեց ամիսների ընթացքում մարդու իրավունքների և, մասնավորապես, իրավապաշտպանների գործունեության պայմանների մշտադիտարկումների արդյունքները վկայում են հատկապես առցանց տիրույթում բռնության սպառնալիքի, ատելության խոսքի ու ապատեղեկատվության աճի մասին: Թիրախն առավելապես հանրային կյանքում ակտիվ կին իրավապաշտպաններն են, ինչպես նաև ԼԳԲՏԻ անձանց շահերի պաշտպանները: Թիրախավորման նման աճը մեծապես պայմանավորված է նախկին իշխանություններին հարող առանձին խմբերի և անհատների, ինչպես նաև Հայ առաքելական եկեղեցու (դրա սպասավորների) կողմից հասարակության լայն զանգվածների համար զգայուն հարցերի շուրջ տարատեսակ մանիպուլյացիաների կիրառմամբ, երբ մարդու իրավունքների հանդեպ զգայունության բարձրացմանն ուղղված քայլերը ներկայացվում են որպես ապագային, ավանդական ընտանեկան արժեքներին հակասող, իսկ ներկայիս իշխանությունները՝ որպես նման «անընդունելի» արժեքների ջատագովներ:

Միաժամանակ, դեռևս 2018 թվականից սկսած ատելության և անհանդուրժողականության աճ է արձանագրվել հանրային մեծ հնչեղություն ունեցող քրեական գործերով նախկին բարձրաստիճան պաշտոնյաների պաշտպանությունն ստանձնած փաստաբանների նկատմամբ, ինչը շարունակվել է նաև հաշվետու ժամանակահատվածում հանգեցնելով նաև փաստաբաններից մեկին ֆիզիկապես հետապնդելու և նրա գույքը վնասելու դեպքի: 2019 թվականին շարունակվել է նաև բնապահպան-ակտիվիստների նկատմամբ մասնավոր հանքարդյունաբերող ընկերության կողմից ներկայացված զրպարտության հայցերով դատական գործերի քննությունը՝ նրանց գործունեության համար ստեղծելով ոչ նպաստավոր պայմաններ: Բացի այդ՝ հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է բնապահպան-ակտիվիստիցներից մեկին խոշոր չափերով խարդախություն կատարելու կասկածանքով առանց բավարար հիմքերի ոստիկանություն հրավիրելու դեպք. որպես հափշտակության կասկածանքի հիմք հանդիսացել էր բնապահպանների կողմից Ամուլսարի պահպանության մեջ ներգրավված անձանց համար կազմակերպված դրամահավաքը:

Առանձին իրավապաշտպանների, ակտիվիստների և հասարակական կազմակերպությունների (այսուհետ նաև՝ ՀԿ) թիրախավորելուց զատ, 2019 թվականի առաջին կիսամյակն աչքի ընկավ ընդհանրապես իրավապաշտպան գործունեության դեմ կազմակերպված արշավով, ինչը, թերևս, առավել ցայտուն կերպով դրսևորվեց Բաց հասարակության հիմնադրամեր-Հայաստանի գործունեության և հատկապես հիմնադրամի շահառուների դեմ սկսված պայքարով:

Չեկույցում իրավապաշտպանների իրավունքների խախտումների և նրանց նկատմամբ հետապնդումների դեպքերը ներկայացնելուն զուգահեռ անդրադարձ է կատարվել նաև սեփական իրավունքների պաշտպանության ուղղությամբ իրավապաշտպանների ձեռնարկած միջոցներին ու դրանց արդյունքներին, Մարդու իրավունքների տուն Երևանի և այլ հասարակական կազմակերպությունների կողմից արված հայտարարություններին ու ներկայացված առաջարկություններին:

1. Կին իրավապաշտպաններն ատելության խոսքի թիրախ

1.1. Ատելության նոր ալիք կին իրավապաշտպան Լարա Ահարոնեանի դեմ

2019 թվականի առաջին կիսամյակում կին իրավապաշտպանների նկատմամբ հատկապես առցանց տիրույթում արձանագրվել է ատելության խոսքի, հետապնդումների ու բռնության սպառնալիքի, վիրավորանքի ու գրպարտության աճ: Կին իրավապաշտպաններից Լարա Ահարոնեանը դեռևս 2013 թ. սկսած բազմիցս թիրախավորվել է, ինչը մեծապես պայմանավորված է գենդերային հավասարության, կանանց սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքների ոլորտում նրա ցուցաբերած առանձնակի ակտիվությամբ: Ատելության խոսքի և թշնամանքի հերթական ալիքը կին իրավապաշտպանի դեմ բարձրացավ 2019 թ. մարտի 8-ին «Քաղաքացիական հասարակություն-Ազգային ժողով համագործակցության հարթակ՝ հանուն կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների» խորագրով միջոցառմանն իր ելույթում հնչեցված մտքերի համար: Ելույթում Լարա Ահարոնեանը մասնավորապես խոսում էր բոլոր կանանց, այդ թվում՝ աղքատ, հաշմանդամություն ունեցող, միայնակ մայր, լեսբի, տրանս և բիսեքսուալ կանանց մասին՝ ընդգծելով քաղաքականությունների մշակման ընթացքում բոլոր կանանց շահերը հաշի առնելու անհրաժեշտությունը¹: Կին իրավապաշտպանի նկատմամբ, ի թիվս այլնի, հնչեցվեցին նրան սպանելու, բռնաբարելու և ընտանիքին վնասելու սպառնալիքներ: «Սրա նմաններին պետք է վառել մեր անհանդուրժողականության ու ժխտողականության կրակի վրա», - ի պատասխան Ահարոնեանի հայտարարության՝ ֆեյսբուքյան իր էջում գրում է իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Հայկյանը²: Լարա Ահարոնեանի գնահատմամբ՝ այդ սպառնալիքների նպատակը իրավապաշտպաններին լռեցնելն է, քանի որ, ինչպես իրավապաշտպանն է նշում, «հայրիշխանական, պահպանողական հասարակության մեջ թույլ չի տրվում, որ կինն արտահայտի իր կարծիքը տարբեր թեմաների շուրջ»³:

Լարա Ահարոնեանն իր նկատմամբ սպառնալիքներ հնչեցրած անձանց հայտնաբերելու, նրանց քրեական պատասխանատվություն ենթարկելու վերաբերյալ հաղորդում է ներկայացրել ՀՀ իրավապահ մարմիններին⁴: «Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպության համահիմնադիր Գոհար Շահնազարյանը մեզ հետ զրույցում հայտնեց, որ սույն զեկույցի կազմման պահին քրեական գործով նախաքննությունը շարունակվում է, և որ սպառնալիքներ տված անձինք դեռևս հայտնաբերված չեն: Լարա Ահարոնեանի կողմից նաև քաղաքացիական հայցեր են ներկայացվել Hayeli.am և Livenews.am կայքերի և, մասնավորապես, քաղաքացի Հայկ Այվազյանի դեմ վերջինիս կողմից արված և նշված լրատվամիջոցների կողմից տարածված այն հայտարարության համար, որ Լարա Ահարոնեանը «գբաղված է երեխաների պղծմամբ»⁵: Նշված քաղաքացիական գործերն, ըստ մեր ունեցած տեղեկությունների, նույնպես ընթացքում են:

Տեղական, տարածաշրջանային և միջազգային մի շարք կազմակերպություններ, այդ թվում՝ Մարդու իրավունքների տուն հիմնադրամը (Օսլո՝ Նորվեգիա) հանդես են եկել Լարա Ահարոնեանի նկատմամբ ատելության խոսքն, առցանց հարձակումները և թշնամանքը

դատապարտող հայտարարություններով՝ ՀՀ պատկան մարմիններին կոչ անելով ձեռնարկել իրավապաշտպանի շահերի պաշտպանությանն ուղղված անհրաժեշտ միջոցներ: Գոհար Շահնազարյանը, կարևորելով այդ օրերին իրենց գործընկերների, այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների աջակցությունը, ցավով նշում է, որ ՀՀ պետական մարմինների կողմից համարժեք արձագանք չի տրվում իրավապաշտպանների դեմ ոտնձգությունների դեպքերին, թեպետ ընդհանուր առմամբ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում, ըստ իրավապաշտպանի, առկա են դրական տեղաշարժեր: Հայտարարությամբ հանդես են եկել նաև «Մարդու իրավունքների տուն Երևան» և «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» հասարակական կազմակերպությունները՝ ՀՀ պատկան մարմիններից, ի թիվս այլևի, պահանջելով.

- **նշված դեպքերով իրականացնել պատշաճ քննություն, ինչպես նաև ընդունել գեղեցիկ զգայուն քաղաքականություն՝ ընդգծելով նշված ոլորտում միջազգային նորմերին համապատասխան գործելու անհրաժեշտությունը⁶:**

1.2. «Իմ մարմինն անձնական է» գրքի շնորհանդեսի տապալումը կին իրավապաշտպանների դեմ արշավի համատեքստում

Երևանի Բուկինիստ (Գրքերի աշխարհ) գրախանութում 2019 թ. մայիսի 4-ին կազմակերպվել էր «Իմ մարմինն անձնական է» գրքի շնորհանդեսը: Գիրքը հրատարակվել է Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի կողմից և նախատեսված է 3-6 տարեկան երեխաների ծնողների համար: Գրքի քննարկումը հարկադրական կերպով դադարեցվեց 20-25 հոգուց բաղ-կացած խմբի միջամտության արդյունքում, որոնք տեղում սկսել էին աղմուկ բարձրացնել, գոռգոռալ մյուս մասնակիցների վրա: Այդ անձանց կարծիքով՝ գիրքը այլատերականություն է քարոզում և ուղղված է հայկական ավանդական ընտանիքի դեմ⁷: Մինչդեռ, ինչպես նշում է կենտրոնի ծրագրերի ղեկավար Տաթևիկ Աղաբեկյանը՝ գրքի հրատարակմամբ իրենք պարզապես փորձել էին օգնել ծնողներին՝ փոքրիկների հետ այդ թեմայով խոսելու հարցում. «Շատ կարևորում էինք փոքր տարիքի երեխաների հետ խոսել մարմնի անձեռնմխելիության մասին», - նշում է Տաթևիկը⁸: Նշված գրքի շուրջ ծավալված իրադարձությունները չսահմանափակվեցին միայն նման նախաձեռնության պաշտպանությամբ հանդես եկած իրավապաշտպանների թիրախավորմամբ. չեղարկվեցին գրքի նախապես պլանավորած շնորհանդես-միջոցառումները՝ այդ թվում՝ Խնկո-ապոր անվան ազգային-մանկական գրադարանում:

Թեպետ նշված միջադեպի ու հատկապես մասնակիցներից մեկի վրա ձու նետելու առթիվ քրեական գործ հարուցելու վերաբերյալ հաղորդում էր ներկայացվել, սակայն, ինչպես մեզ հետ զրույցում հայտնում է Տաթևիկը, քրեական գործի հարուցումը մերժվել է: Անդրադառնալով միջադեպին՝ Տաթևիկը նաև հայտնեց, որ տեղի ունեցածը հոգեբանորեն ծանր է անդրադարձել իրենց վրա, խոչընդոտվել է իրենց բնականոն աշխատանքը, ստիպված են եղել հետաձգել իրենց որոշ միջոցառումներ: Տաթևիկի փոխանցմամբ՝ իրենք նաև ստիպված էին իրենց կայքից հեռացնել կամ թաքցնել նախորդ տարիներին իրենց միջոցառումներին մասնակցած անձանց նկարներն՝ այդ անձանց ապահովության համար:

Ի պաշտպանություն կենտրոնի և, մասնավորապես, «Իմ մարմինն անձնական է» գրքի՝ ֆեյսբուքյան գրառմամբ հանդես եկավ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Չարուհի Բաթոյանը՝ դատապարտելով շնորհանդեսի խափանման փորձը: Ցույց տալու, որ գրքում այլասերվածության քարոզի մասին խոսք չկա, նախարարն իր ֆեյսբուքյան էջում տեղադրեց գիրքն ամբողջությամբ՝ այն հասանելի դարձնելով հասարակության ավելի լայն շրջանակներին⁹: Ֆեյսբուքյան գրառումից հետո նախարարն ինքը դարձավ ատելության խոսքի թիրախ:

Խնդրին անդրադարձավ նաև ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ նշելով, որ գրքի շուրջ ստեղծված աղմուկը նաև իրեն է ստիպել ծանոթանալ գրքին¹⁰: Վարչապետը, մասնավորապես, անդրադառնալով մանկապղծության վերաբերյալ վիճակագրական տվյալներին՝ կարևորեց երեխաների սեռական դաստիարակության հարցը, ինչին էլ, ըստ վարչապետի, ծառայում է հիշատակված գիրքը: Վարչապետը նաև կարևորեց ոլորտի հասարակական կազմակերպությունների գործունեությունն՝ ընդգծելով դրանց ունեցած հնարավոր դերակատարությունը մանկապղծությունների թվի՝ տարեցտարի արձանագրվող նվազման հարցում:

Անդրադառնալով վարչապետի ելույթին՝ Տաթևիկը գտնում է, որ այն բավական դրական ազդեցություն ունեցավ՝ «կրքերը հանդարտվեցին», ինչը նաև վկայում է այն մասին, որ բարձրացված աղմուկն ընդամենը մանկապղծացիա էր որոշ խմբերի կողմից և ոչ թե հասարակական հուզում: Իսկ ընդհանուր առմամբ խոսելով նոր իշխանությունների մասին՝ Տաթևիկը դրական է գնահատում այն հանգամանքը, որ առանձին պետական պաշտոնյաներ գործընկերային մոտեցում են ցուցաբերում և առավել զգայուն են ոլորտին առնչվող հարցերում:

Ստեղծված իրադրության շուրջ և ի պաշտպանություն Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի՝ մի շարք հասարակական կազմակերպություններ, այդ թվում՝ Մարդու իրավունքների տուն Երևանը և «Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպությունը հանդես եկան հայտարարությամբ, որով, մասնավորապես, իրավապահ մարմիններին կոչ էր արվում:

- **պատշաճ քրեաիրավական գնահատական տալ կատարվածին՝ իրականացնելով գործի արդյունավետ և օբյեկտիվ քննություն, իսկ ՀՀ կառավարությանը՝ ի թիվս այլնի, ապահովել իրավապաշտպանների անխոչընդոտ գործունեությունը¹¹:**

1.3. Չարուհի Մեջլումյանն ատելության խոսքի թիրախում ցմահ դատապարտյալների խնդիրների վերհանման իր պայքարում

Ցմահ ազատազրկման դատապարտված անձանց հարցերով մասնագիտացված լրագրող, փաստաբան Չարուհի Մեջլումյանը 2019 թվականի սկզբին հայտնվեց ատելության խոսքի, վիրավորանքի ու սպառնալիքների թիրախում: Լրագրող-փաստաբանի թիրախավորումը պայմանավորված էր ցմահ դատապարտյալ Միեր Ենոքյանի կողմից ներման խնդրագիր ներկայացնելու հանգամանքի հետ: Չարուհու թիրախավորումն էլ ավելի ուժգնացավ ներ-

ման հարցերի քննարկման խորհրդակցական հանձնաժողովի կողմից Միեր Ենոքյանի ներման խնդրագրին դրական եզրակացություն տալու վերաբերյալ տեղեկության արտահոսքից հետո: Այս կապակցությամբ, մասնավորապես, Չարուհին նշում է. «Մեր իրավունքների տոտալ խախտումներն սկսվեցին, երբ ներման հանձնաժողովից դռնփակ քննարկվող հարցը (ի դեպ, միայն Միերի պարագայում) ապօրինաբար հասանելի դարձավ այդ գործընթացի կողմ չհանդիսացող ընտանիքին»¹²: Հարկ է նշել, որ ներման խնդրագրի վերաբերյալ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից տրվեց բացասական եզրակացություն:

Հատկանշական է, որ Չարուհի Մեջլումյանն ու Միեր Ենոքյանն ամուսնացել էին դեռևս 2013 թվականին, սակայն ամուսնության փաստը հանրայնացվեց միայն 2019 թվականի հունվարին, ինչն էլ ավելի ծանրացրեց լրագրող-փաստաբանի դրությունը¹³: Ցմահ ազատագրվածների խնդիրների բարձրացմանն ուղղված լրագրողի բազմամյա մասնագիտական գործունեությունը որակվեց որպես անձնական մղումներով դրված, այնինչ Չարուհի Մեջլումյանը նշված խնդրով սկսել էր զբաղվել դեռևս 2010 թվականից: Հերքելով կողմնակալ լինելու վերաբերյալ իր հասցեին հնչեցված մեղադրանքները՝ լրագրող-փաստաբանը, նշում է, որ ինքը զբաղվել է նմանատիպ տասնմեկ գործով, այդ թվում՝ ցմահ դատապարտյալ Սողոմոն Քոչարյանի գործով¹⁴: Նշված տասնմեկ գործերից չորսով ինքն անձամբ է ի հայտ բերել նոր երևան եկած հանգամանքներ: Հատկապես Սողոմոն Քոչարյանի գործի վերաբացումից հետո ինքը մշտապես գտնվել է Նախկին իշխանությունների թիրախում, ըստ այդմ էլ՝ Միեր Ենոքյանի գործով ներկայիս զարգացումները Չարուհին, մեծ հաշվով, գնահատում է որպես ներկայիս իշխանությունների դեմ նույն ուժերի կողմից ուղղորդված մանիպուլյացիոն քայլ:

Առցանց տիրույթից գատ, ըստ լրագրող-փաստաբանի, իր նկատմամբ, եղել է նաև իրական բռնության վտանգ. «Ես հիմա քայլում եմ փողոցով ու չգիտեմ տեղ կհասնեմ, թե՛ ոչ», - նշում է Չարուհին¹⁵: Այս կապակցությամբ Չարուհի Մեջլումյանի կողմից մարդու կյանքի և առողջության, սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված մի շարք հանցագործունեների, այդ թվում անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելու, պահելու, օգտագործելու կամ տարածելու (ՀՀ քրեական օրենսգիրք, 144 հոդված) վերաբերյալ քրեական գործ հարուցելու վերաբերյալ հաղորդումներ են ներկայացվել ոստիկանություն: Քրեական գործի հարուցումը բոլոր նշված դրվագներով մերժվել է: Մեզ հետ զրույցում Չարուհին այս կապակցությամբ հայտնեց, որ իրենց կողմից մերժման որոշումները բողոքարկվել են դատական կարգով. առաջին ատյանի դատարանը քննչական մարմնի որոշումը թողել է անփոփոխ, սակայն իրենք նպատակադրված են գործը հասցնել Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Չարուհի Մեջլումյանի պաշտպանությամբ հանդես եկավ «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան, որին միացել է նաև Մարդու իրավունքների տուն Երևանը¹⁶: Անդրադառնալով Չարուհի Մեջլումյանի դեմ սանձագերծված հարձակմանը, նրա՝ որպես կնոջ պատվի և հեղինակության նկատմամբ լուրջ ոտնձգությանը, իրավապաշտպան կազմակերպությունները դատապարտեցին նման գործելաոճը.

- **անթույլատրելի համարելով կնոջ մասնավոր կյանքին միջամտելու և հանրային դաշտում նրան թիրախավորելու գործելաոճը, որը հարված է հասցնում նրա արժանապատվությանն ու բարի համբավին**¹⁷:

2. ԼԳՏԻ անձանց շահերի պաշտպանները՝ ատելության ու բռնության սպառնալիքի թիրախ

«Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն, իրավապաշտպան Մամիկոն Հովսեփյանը մեզ հետ զրույցում անդրադառնալով հեղափոխությունից հետո արձանագրված փոփոխություններին՝ նշեց, որ ի հեճուկս իրենց ունեցած հույսերին ու ակնկալիքներին, մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից զգալի փոփոխություններ չեն արձանագրվել: Ինչպես Հովսեփյանն է նշում, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները բավարար չափով ներառված չեն ոլորտին առնչվող հարցերի քննարկմանը, իսկ օրենքների նախագծերի վերաբերյալ իրենց ներկայացրած առաջարկությունները հիմնականում մերժվում են, ինչպես օրինակ՝ իրավահավասարության ապահովման վերաբերյալ օրենսդրական ակտի դեպքում: Ըստ իրավապաշտպանի՝ սա որոշ չափով պայմանավորված է այն հանգամանքով, որ ներկայիս խորհրդարանում և կառավարությունում ընդգրկված են նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, որոնք իրենց՝ իրավապաշտպաններին, հուսադրում են, թե խնդիրներին ծանոթ լինելով, դրանց լուծում կտան: Իրականությունն, սակայն, այլ է: Ըստ Հովսեփյանի՝ հեղափոխությունից հետո իրավապաշտպանները և քաղաքացիական հասարակությունն ընդհանուր առմամբ պասիվ վիճակում են, սակայն արդեն եկել է գործելու ժամանակը:

Խոսելով կոնկրետ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով ճնշումների մասին՝ Հովսեփյանը նշում է, որ այս տարվա առաջին կեսին ավելի շատ դեպքեր են գրանցվել, քան ողջ նախորդ տարվա ընթացքում: Այսպես 2019թ. 1-ին կիսամյակում հունվարից հունիս ամիսների ընթացքում, «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ն արձանագրել է սեռական կողմնորոշման և (կամ) գենդերային ինքնության հիմքով պայմանավորված խտրականությամբ զուգորդված իրավախախտումների 24 դեպք՝ 2018 թվականի ողջ ընթացքում արձանագրված 25 դեպքի համեմատությամբ¹⁸: Նշվածն, ըստ Հովսեփյանի, որոշ չափով պայմանավորված է նաև տեղի ունեցած միջադեպերին իրավապահների կողմից ոչ համարժեք արձագանք տալու հանգամանքով: Մասնավորապես՝ Շուռնուխի գործով¹⁹, ըստ Հովսեփյանի, իրավապահների կողմից ամեն ինչ արվեց գործը համաներմամբ «փակելու» համար: Իսկ Լիլիթ Մարտիրոսյանի դեպքով, որին անդրադառնում ենք ստորև, ընհանրապես քրեական գործ չհարուցվեց՝ չնայած ակնհայտ սպառնալիքներին, այդ թվում՝ դանակի ցուցադրմամբ կատարված բռնության սպառնալիքին:

2.1. Լիլիթ Մարտիրոսյանի դեմ ոտնձգություններն ու իրավունքի ոտնահարումները

2.1.1. Լիլիթ Մարտիրոսյանի Էլույթն ԱԺ-ում ու դրան հաջորդած ատելության ալիքը

2019 թ. ապրիլի 5-ին ՀՀ Ազգային ժողովում «Մարդու իրավունքների ազգային օրակարգ. ՄԱԿ-ի համընդհանուր պարբերական դիտարկում» թեմայով խորհրդարանական լսումների ժամանակ, ի թիվս այլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ու

իրավապաշտպանների, տրանսգենդեր համայնքին վերաբերող հարցերով ելույթ ունեցավ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության նախագահ, տրանսգենդեր կին Լիլիթ Մարտիրոսյանը: Կարևորելով հետհեղափոխական Հայաստանում իրեն ընձեռված այդ բացառիկ հնարավորությունը՝ Լիլիթ Մարտիրոսյանը ներկայացրեց համայնքի անդամների նկատմամբ տարիներ շարունակ դրսևորված վատ վերաբերմունքի պատմությունը՝ կոչ անելով իշխանություններին ձեռնամուխ լինել գենդերային հավասարությունն ապահովող օրենսդրական բարեփոխումների իրականացմանը²⁰: Ելույթին անմիջապես արձագանքեց Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Նաիրա Չոհրաբյանը («Բարգավաճ Հայաստան» խմբակցություն)՝ անելով խորական բնույթի դիտարկում. «Դուք խախտել եք մեր օրակարգը, ես սա համարում եմ ուղղակի անհարգալից վերաբերմունք հանձնաժողովի նկատմամբ: Չի կարելի խախտել օրակարգը, որը հստակ սահմանված էր»²¹: Ի պատասխան նշված հայտարարության՝ Լիլիթ Մարտիրոսյանը մի քանի այլ իրավապաշտպանների ուղեկցությամբ՝ որպես բողոքի նշան, լքեց նիստերի դահլիճը: Աժ ամբիոնից տրանսգենդեր կնոջ ելույթն ատելության խոսքի, բռնության սպառնալիքի, ինչպես նաև ԼԳԲՏի մարդկանց թիրախավորման, նրանց նկատմամբ թշնամանքի մեծ ալիք առաջ բերեց:

Այսպես՝ սոցիալական ցանցերում և լրատվական միջոցներով տարածվեց մի տեսանյութ, որտեղ այսպես կոչված «Արծիվ-30 Արարատ» մահապարտների գնդի անդամներից մեկը, հայտարարելով տրանսգենդերների դեմ մեծամասշտաբ պայքար սկսելու մասին, ենթադրաբար հենց Լիլիթ Մարտիրոսյանի հասցեին հնչեցրեց սպանության սպառնալիք, ասելով. «Տրանսգենդերներից մեկին, որ սատկացնենք, մեզ մարդասպան չսարքեք»²²: Մեկ այլ դեպքում Երկրապահ կամավորականների միության համագումարում նախագահի ընտրությունից հետո միության անդամ Արարատ Խանդոյանը առաջարկեց ԵԿՄ օրակարգային խնդիրների մեջ ավելացնել ԼԳԲՏ համայնքի անդամների վերացման հարցը²³:

Իրենց ելույթներում հատկապես խորական էին Աժ «Բարգավաճ Հայաստան» խմբակցության պատգամավորները: Պատգամավորներից Վարդան Ղուկասյանը, մասնավորապես, առաջարկեց այրել ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչներին՝ ավելացնելով, որ դատվելուց չի վախենում²⁴: Մեկ այլ պատգամավոր՝ Գևորգ Պետրոսյանը, խիստ բացասաբար վերաբերվելով տրանսգենդեր կնոջը Աժ ամբիոնից խոսելու հնարավորությունն տալու փաստին, վերահաստատեց ԼԳԲՏ քարոզչությունը արգելող օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու իր մտադրությունը²⁵: Նույն խմբակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանն էլ, անդրադառնալով ելույթին և դրա շուրջ ծավալված իրադարձություններին, նշում է, որ դա (սեռական այլ կողմորոշումը՝ իմը) արատ է, և որ իրենք թույլ չեն տալու, որ դա տարածվի²⁶: Իսկ ահա Նաիրա Չոհրաբյանի կողմից Լիլիթ Մարտիրոսյանի ելույթի վերաբերյալ արված խորական դիտարկման վերաբերյալ թե՛ նշված խմբակցության պատգամավորները և թե՛ Նաիրա Չոհրաբյանն ինքը հերքել են խտրականություն դրսևորելու փաստը, ասելով, թե Նաիրա Չոհրաբյանի բողոքն օրակարգի խախտման հետ է կապված եղել²⁷: Այդուհանդերձ, իր հարցազրույցներից մեկում, անդրադառնալով Լիլիթ Մարտիրոսյանի ելույթին, Նաիրա Չոհրաբյանն այն որակեց՝ որպես անպարկեշտ քայլ, ապտակ խորհրդարանին:

«Իմ քայլը» դաշինքից պատգամավոր Սոֆյա Հովսեփյանի կողմից մարդկանց զայրույթը տրամաբանական որակվեց՝ ասելով, որ ներկայումս ԼԳԲՏ համայնքի իրավունքների մասին այսչափ քննարկումը հանգեցրել է մնացածի իրավունքների ոտնահարմանը²⁸: Որպես ակտիվիստ հանդես եկող Մարինա Խաչատրյանն էլ իր ֆեյսբուքյան Էջում անդրադառնալով

տրանսգենդեր անձանց նկատմամբ դրսևորված բռնության վերաբերյալ Լիլիթ Մարտիրոսյանի հայտարարությանը՝ գրում է. «Հիմա էտ տրանսգենդերը թող իր ԼԳԲՏ կոլեգաներից նեղանա իրեն բռնաբարելու համար ու պայքարի նման տականքների դեմ», ապա հավելում «Հո նորմալ մարդը չի՞ անի այդպիսի բան»²⁹։^ա

2.1.2. Բողոքի ցույցեր՝ ընդդեմ Լիլիթ Մարտիրոսյանի ելույթի

ՀՀ Ազգային ժողովում 2019 թ. ապրիլի 5-ին ունեցած ելույթից հետո Լիլիթ Մարտիրոսյանի թիրախավորումն առցանց տիրույթից կարճ ժամանակ անց տեղափոխվեց իրական կյանք։ Մի խումբ անձիք, այդ թվում՝ հոգևորականներ, բողոքի ակցիաներ կազմակերպեցին ԱԺ շենքի դիմաց՝ ընդդեմ Լիլիթ Մարտիրոսյանի ԱԺ-ում ունեցած ելույթի՝ պահանջելով հանդիպում ԱԺ ղեկավարության հետ։ Ցույցերին միացան նաև մեր կողմից արդեն իսկ հիշատակված «Բարգավաճ Հայաստան» խմբակցության պատգամավորներից ոմանք³⁰։ Իսկ ահա ցույցերին մասնակցած հոգևորականներից Տեր Ղազարի պնդմամբ՝ ելույթի նպատակը ժողովրդին ապականելն էր, պղծության վարժեցնելն ու պղծելը։ Հոգևորականն անգամ պահանջեց ինկարկել ԱԺ ամբիոնը։

Ապրիլի 5-ի բողոքի ցույցերի ժամանակ Aysor.am լրատվական կայքի հետ հարցազրույցում բողոքի մասնակից քաղաքացիներից մեկն էլ սպանության սպառնալիք հնչեցրեց ԼԳԲՏԻ համայնքի ներկայացուցիչների հասցեին։ Այսպես՝ մոտից հանելով դանակը և դրանով վիզը կտրելու նշան ցույց տալով՝ քաղաքացին ասում է, որ դրանով պատրաստ է «ուտիլիզացնել սեռական փոքրամասնություններին»։ Նշված փաստի առթիվ ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժնում թեև նյութեր նախապատրաստվեցին, սակայն քրեական գործի հարուցումը մերժվեց՝ հանցակազմի բացակայության հիմքով³¹։

Այնուհետև, բողոքի ակցիա կազմակերպվեց 2019 թ. ապրիլի 12-ին՝ Հանրային հեռուստառադիոընկերության դիմաց՝ «Հայկական արժեքների պաշտպանության «Կամք»» նախաձեռնության կողմից։ Ակցիայի նպատակն էր՝ պարզաբանում ստանալ հեռուստառադիոընկերության ղեկավարությունից՝ ապրիլի 5-ին ԱԺ-ի ամբիոնից տրանսգենդերի ելույթը «Հանրային» հեռուստաալիքով եթեր հեռարձակելու վերաբերյալ։ Ակցիայի մասնակիցներն այնուհետև քայլերթը շարունակեցին դեպի Հայաստանում ՄԱԿ-ի և ԵՄ գրասենյակներ՝ իրենց բողոքի ձայնը բարձրացնելու ՀՀ ներքին գործերին միջամտելու փորձերի դեմ³²։

^ա Մարինա Խաչատրյանի դեպքում, թերևս, հետաքրքրական է այն, որ դեռևս 2018 փետրվար ամսին հայաստանյան քաղաքացիական հասարակության միջադեպեր կայացուցիչներ միահամուռ հանդես եկան նրա պաշտպանությամբ՝ փետրվարի 13-ին Երևանի ավագանու նիստում ՀՀԿ խմբակցության մի խումբ անդամների կողմից վերջինիս նկատմամբ բռնություն ենթարկելու դեպքի առնչությամբ։ Չնայած դրան՝ Խաչատրյանը տարբեր առիթներով բազմիցս է վիրավորանքներ ու ատելության խոսք հնչեցրել տարբեր իրավապաշտպանների, այդ թվում՝ իր շահերի պաշտպանությամբ հանդես եկածների հասցեին։ Ի դեպ, Խաչատրյանը ծեծի էր ենթարկվել ավագանու նիստի ընթացքում իրականացրած ակցիայի պատճառով, որով նա իր բողոքի ձայնն էր բարձրացնում Երևանի Նուբարաշեն վարչական շրջանում վնասված կոյուղատարի արդյունքում տարածված գաբաշահոտության դեմ ի պաշտպանություն տեղի բնակիչների։

2.1.3. Ներպետական և միջազգային անդրադարձը Լիլիթ Մարտիրոսյանի ելույթին հաջորդած իրադարձությունների վերաբերյալ

Լիլիթ Մարտիրոսյանի ելույթը և դրան հաջորդած իրադարձությունները մեծ արձագանք գտան միջազգային հանրության շրջանակներում:

Դեպքի առնչությամբ համատեղ հայտարարությամբ հանդես եկան Հայաստանում Եվրոպական միության պատվիրակությունը և Հայաստանում հավատարմագրված ԵՄ անդամ պետությունների դեսպանությունները: Համատեղ հայտարարությունում մասնավորապես ասված է, որ նշված կառույցները «խորապես մտահոգված են վերջին շրջանում տեղի ունեցող մի շարք դեպքերի առնչությամբ, երբ Հայաստանում փոքրամասնությունների և իրավապաշտպանների նկատմամբ լուրջ սպառնալիքներ, այդ թվում մահվան սպառնալիքներ են հնչել: Ատելության խոսքը, այդ թվում մահվան սպառնալիքներն ուղղված Լիլիթ Մարտիրոսյանին, նրա գործընկերներին և ամբողջ ԼԳՏԻ համայնքին հանդիսանում են այդ անհանգստացնող միտումների ամենաթարմ դրսևորումը և հանդիսանում են խտրականություն, որն արգելվում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի դրույթներով, որին Հայաստանը մասնակից է, որը նաև արտացոլված է ՀՀ Սահմանադրության մեջ»³³: Եզրափակելով՝ ԵՄ-ն Հայաստանում բոլորին հորդորում է դատապարտել ատելության խոսքը, և կոչ անում իրավապահ մարմիններին՝ ձեռնարկել անհապաղ քայլեր Հայաստանի քաղաքացիների ֆիզիկական անվտանգության երաշխիքների ապահովման ուղղությամբ³⁴:

Հայտարարությամբ է հանդես եկել նաև միավորված ազգերի կազմակերպության հայաստանյան գրասենյակը, որով գրասենյակն իր մտահոգությունը հայտնեց «վերջին ժամանակներս շատացած ատելության խոսքի եւ մարդու իրավունքների եւ ԼԳՏԻ ակտիվիստների նկատմամբ բռնության սպառնալիքների դեպքերով»՝ կոչ անելով Հայաստանի իշխանություններին ըստ օրենքի հետաքննել եւ դատական կարգով հետապնդել ԼԳՏԻ համայնքի անդամների նկատմամբ ոտնձգությունների եւ չարաշահումների դեպքերը³⁵:

Ի պատասխան Երևանում հավատարմագրված մի շարք դիվանագիտական ներկայացուցչությունների հայտարարության՝ ՀՀ ԱԳՆ մամուլի խոսնակը 10.04.2019 թ. հանդես եկավ պատասխանով³⁶: Պատասխանում մամուլի խոսնակը, ընգծելով ՀՀ կառավարության հավատարմությունը մարդու իրավունքների պաշտպանության և խրախուսման իր պարտավորություններին, նշում է, որ մարդու իրավունքները, որպես կանոն, արդյունավետորեն գործում են, եթե մաս են դառնում հասարակական կոնսենսուսի և ընկալվում են, որպես համընդհանուր հասարակական և բարոյական արժեքներ³⁷: Այս նկատառմամբ՝ ըստ մամուլի խոսնակի. «միջազգային գործընկերները պետք է առավել հարգանք և զգայունություն ցուցաբերեն հայկական հասարակության հանդեպ և ձեռնպահ մնան հասարակական քննարկումների անհարկի ուղղորդումից, եթե անգամ նրանք համաձայն չեն դրանց տոնայնության հետ»³⁸: ՀՀ ԱԳՆ նշված պատասխանը խիստ բացասաբար ընդունվեց հայաստանյան քաղաքացիական հասարակության կողմից:

Խնդրին անդրադարձավ նաև ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ նշելով, որ նախկին իշխանությունների կողմից Լիլիթ Մարտիրոսյանին ՀՀ քաղաքացու անձնագրի տրամադրումը նշանակում է, որ նրան շնորհվել են ՀՀ քաղաքացու բոլոր իրավունքներն՝ առանց բացառության՝ փորձելով վերջ տալ, իր գնահատմամբ, տեղի ունեցող քաղաքական

շահարկումներին: Ընդգծելով այն փաստը, որ Լիլիթ Մարտիրոսյանի ելույթը տեղի է ունեցել հենց մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովում, Վարչապետը խնդրահարույց համարեց հանձնաժողովի նախագահ Նաիրա Չոհրաբյանի վարքագիծը՝ նշելով, որ նման վարքագիծը կասկածի տակ է դնում Հայաստանում մարդու իրավունքների վիճակը³⁹:

«Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի և Մարդու իրավունքների տուն Երևանի հետ համատեղ, դիմում ներկայացվեց ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանին՝ հետևյալ պահանջով.

- **ձևավորել Էթիկայի ժամանակավոր հանձնաժողով՝ Նաիրա Չոհրաբյանի, Գագիկ Ծառուկյանի, Գևորգ Պետրոսյանի և Վարդան Ղուկասյանի արտահայտությունները որպես պատգամավորի Էթիկայի կանոնների խախտում ճանաչելու հարցը քննարկելու համար**⁴⁰:^բ

^բ Ինչպես մեզ հետ զրույցում նշեց Հովսեփյանը, մինչ օրս՝ դիմումը ներկայացնելուց ամիսներ անց, դիմումի վերաբերյալ պատասխան չի ստացվել:

3. Արշավ քաղաքացիական հասարակության դեմ

3.1. Ապատեղեկատվություն և կեղծ մեղադրանքներ Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի դեմ

2019 թվականի առաջին կիսամյակն առանձնացավ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների դեմ կազմակերպված ուղղորդված շարժմամբ: Շարժման թիրախն առավելապես Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանն է (այսուհետ՝ Հիմնադրամ) և նրա շահառուները: Հիմնադրամի դեմ արշավը նախ սկսվեց առցանց տիրույթում, երբ առանձին խմբեր և անհատներ ֆեյսբուք սոցիալական ցանցում, ինչպես նաև իրենց հետ ասոցացվող լրատվամիջոցներով սկսեցին տարածել տեղեկատվություն առանձին հասարակական կազմակերպություններին, նախաձեռնություններին և անհատներին Հիմնադրամի տրամադրած դրամական միջոցների վերաբերյալ՝ նշելով գումարի չափը, նպատակը, ծրագրի հակիրճ բովանդակությունը և այլն: Թիրախում, մասնավորապես, հայտնվեցին «Ռեստարտ» ուսանողական նախաձեռնությունը, «Կանանց ռեսուրսային կենտրոն», «Փինք» և մի շարք այլ հասարակական կազմակերպություններ ու անհատներ: Թիրախավորվեցին նաև ներկայիս բարձաստիճան մի շարք պաշտոնյաներ, որոնք նախկինում ընդգրկված են եղել տարբեր հասարակական կազմակերպություններում: Սրանով պայմանավորված՝ նշված պաշտոնատար անձանց ներկայիս պետական, հասարակական-քաղաքական գործունեությունը ներկայացվում էր որպես Հիմնադրամի շահերին սպասարկող, հակապետական և ապագային: Ի թիվս այլնի, նշված Հիմնադրամից դրամաշնորհ ստացած անձինք և կազմակերպությունները բնորոշվում էին որպես «սորոսականներ», «ծախու արարածներ», «Սորոսի սպասավորներ», իսկ նրանց գործունեությունը՝ որպես հայ ավանդական ու ազգային արժեքներին հակասող, հայ ընտանիքի և հասարակության հիմքերը խարխլող: Հետաքրքրական է, սակայն, որ նման «մեղադրանքներ» հնչեցնող անձանցից ոմանք ևս, ինչպես նաև մի շարք կազմակերպություններ, նախկինում դրամաշնորհ (դրամաշնորհներ) էին ստացել նույն Հիմնադրամից⁴¹, ինչպես օրինակ՝ «Սորոսի հիմնադրամի» քննադատ Հայկ Բաբուխանյանը և այլք⁴²: Առավել ցայտուն է «Ռեստարտ» նախաձեռնության օրինակը. նախաձեռնությունը բազմիցս մեղադրվել է մեծ չափերի դրամաշնորհ ստանալու, ստացած դրամաշնորհը համալսարանի ներքին կյանքին միջամտելու նպատակով օգտագործելու մեջ, մինչդեռ, ինչպես պարզվեց հետագայում, համալսարանն ինքը բազմիցս դրամաշնորհներ է ստացել Հիմնադրամից: Հիմնադրամի հասցեին չհիմնավորված ու զրպարտչական բնույթի տեղեկությունների տարածմամբ առավելապես աչքի ընկան Հայկ Այվազյանը, Նարեկ Սամսոնյանը և Նարեկ Մալյանը: «Սորոսի հիմնադրամը հայտարարում էմ այլասերումների, մանկապղծության և պետական հեղաշրջումների հովանավոր», - իր ֆեյսբուքյան էջում գրում է Հայկ Այվազյանը⁴³:

Նկատի ունենալով, որ առանձին անհատներ ու կազմակերպություններ հիմնականում թիրախավորվում էին Հիմնադրամից դրամաշնորհներ ստանալու և ստացած դրամաշնորհները ոչ «ազգանպաստ» նպատակներով օգտագործելու մեջ՝ Հիմնադրամը 04.03.2019 թ. հաղորդում տարածեց, որում ընդգծելով «Հայաստանի հասարակական ու քաղաքական դիսկուրսի որոշակի մի հատվածի» կողմից Հիմնադրամի և քաղաքացիական հասարակության իրենց գործընկերների աշխատանքների վերաբերյալ սուտ մեղադրանքներ տարածելու փաստը, Հիմնադրամը կոչ արեց դիմել ողջամիտ ու իրազեկված երկխոսության՝ Հիմնադրամի դեմ հնչած մեղադրանքները որակելով սուտ⁴⁴: Հիմնադրամը մեկ այլ հայտարարությամբ հանդես

եկավ 31.05.2019 թ.⁴⁵: Դրանով Հիմնադրամը, մասնավորապես, դատապարտում էր Հիմնադրամի դեմ «նորերս բարձրացրած կեղծ մեղադրանքները մի փոքրաքանակ խմբի կողմից, որի նպատակն է անկայունացնել Հայաստանը և պառակտում սերմանել»: «Հնչեցրած ստախոսությունը, որը մեղադրում է հիմնադրամին ամեն հնարավոր հանցանքի մեջ՝ երկրի կառավարությանը ղեկավարելուց մինչև քաղաքացիական բախումների հրահրում, բացահայտ հերյուրանք է», - ասված է հայտարարության շարունակությունում⁴⁶:

Անդրադառնալով Հիմնադրամի շուրջ ստեղծված իրավիճակին և, ընդհանրապես, քաղաքացիական հասարակության ներկայիս վիճակին՝ Հիմնադրամի գործադիր տնօրեն Լարիսա Մինասյանը մեզ հետ զրույցում, մասնավորապես նշեց, որ եթե նախկինում իրավապաշտպանների գործունեության սահմանափակումները կանխորոշված քաղաքականություն էր՝ ի դեմս պետական իշխանության մարմինների, ապա այժմ հեղափոխությունից հետո, հակառակն է. այն ռևանշիստական ուժերի, հովանավորված խմբերի ու սաբոտաժի արդյունք է: «Նախկին իշխանությունները բացարձակ վտանգ չէին տեսնում, իսկ հեղափոխությունը վիրավորեց ու կատաղացրեց նրանց»,- ասում է տիկին Մինասյանը: Այնուհետև, շարունակելով նշում է. «Այժմ իրավապաշտպանների դեմ խոսողներն ու ակցաներ իրականացնողներն ուղղորդված են թե՛ դրսի և թե՛ ներսի որոշ ուժերի կողմից, ունեն լուրջ ռեսուրսներ, այդ թվում մեղիա ռեսուրս»:

3.2. Բողոքի ակցիաներ Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի գրասենյակի դիմաց

Առցանց տիրույթում քաղաքացիական հասարակության և, մասնավորապես, Հիմնադրամի դեմ սանձազերծված արշավը տեղափոխվեց իրական կյանք: Այսպես կոչված «ՎԵՏՕ» շարժումն օրեր շարունակ բողոքի ակցիաներ իրականացրեց Հիմնադրամի գրասենյակի դիմաց՝ փաստացի փակելով դրա մուտքը: Բողոքի ակցիաներն սկսվեցին 2019 թ. մայիսի 31-ին և ընդհատումներով շարունակվեցին մինչև հունիսի 11-ը: Նշված բողոքի ակցիաների պատճառով խաթարվել էր Հիմնադրամի բնականոն գործունեությունը, ինչպես նաև աշխատակիցների ազատ ելումուտը գրասենյակի տարածք: Ակցիաների մասնակիցների մուտքը Հիմնադրամի գրասենյակի տարածք հնարավոր եղավ կանխել միայն տեղում ոստիկանական ուժերի ներկայության շնորհիվ:

Ակցիաները շարունակվեցին նաև 2019 թ. հունիսի 3-ին՝ դարձյալ Հիմնադրամի գործունեությունը Հայաստանում արգելելու պահանջով⁴⁷: Նշված օրը ոչ բազմամարդ ակցիայի մասնակիցները փորձ արեցին ճեղքել ոստիկանական պատնեշը և մուտք գործել գրասենյակի տարածք, ինչի պատճառով բախումներ առաջացան ակցիայի մասնակիցների և ոստիկանների միջև: Բողոքի ակցիաների ժամանակ Հիմնադրամի հասցեին կրկին հնչեցվեցին դավանափոխության ու ազգադավության ծրագրեր իրականացնելու մեղադրանքներ, ինչպես նաև պետական լծակներով օժտված լինելու վերաբերյալ պնդումներ:

Անդրադառնալով Հիմնադրամի գրասենյակի դեմ իրականացված ակցիաներին՝ Լարիսա Մինասյանը մեզ հետ զրույցում նշեց, որ դրանց պատճառով երեք-չորս օր իրենց բնականոն աշխատանքային գործունեությունը խաթարված է եղել: Նշեց նաև, որ թեպետ իրավապահ մարմիններին դեպքի ամնչությամբ հաղորդում չեն ներկայացրել, սակայն ահազանգել էին

նստիկանությանն՝ իրենց անվտանգությունն ապահովելու համար:

Ի պաշտպանություն Հիմնադրամի՝ հայաստանյան քաղաքացիական հասարակության մի շարք ներկայացուցիչներ՝ վաթսուևվեց կազմակերպություններ, հանդես եկան համատեղ հայտարարությամբ⁴⁸: Անդրադառնալով «քաղաքացիների մի խմբի կողմից» հիմնադրամի գրասենյակի մոտ իրականացված ցույցերի թիրախավորված բնույթին, հասարակական կարգի պահպանություն իրականացնող ոստիկանների նկատմամբ սադրանքներին, Հիմնադրամի աշխատակիցների նկատմամբ սպառնալիքներին, ազգային շահերի անվան տակ բռնության, ատելության խոսքի տարածման դրսևորումներին, դրանք որակվեցին անընդունելի՝ հենց մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից: «Խեղաթյուրված և իրականությանը չհամապատասխանող տեղեկությունների, մտացածին ենթադրությունների և դրանց հիման վրա գնահատականների տարածումն ապարդյուն փորձ է նսեմացնելու մարդու իրավունքների պաշտպանության, հաշվետու և թափանցիկ կառավարման ձևավորման գործում քաղաքացիական հասարակության դերն ու նշանակությունը, որի աջակցման գործում իր ներդրումն ունի Հիմնադրամը», - ասված է հայտարարության մեջ: Եզրափակելով՝ համատեղ հայտարարությամբ հանդես եկած կազմակերպություններն իրավապահ մարմիններին կոչ արեցին.

- **միջոցներ ձեռնարկել հասարակական կարգը պահպանելու, աշխատակիցների և այցելուների անարգել ու անվտանգ տեղաշարժն ապահովելու ուղղությամբ, ինչպես նաև կանխել հնարավոր ոտնձգությունները մարդկանց կյանքի, առողջության ու գույքի նկատմամբ:**

4. Դատական գործեր և առցանց հետապնդում ընդդեմ բնապահպան-ակտիվիստների

«Լիդիան-Արմենիա» մասնավոր հանքարդյունաբերող ընկերության կողմից բնապահպան-ակտիվիստների դեմ զրպարտության, ինչպես նաև ընկերության գործարար համբավն արատավորող արտահայտությունների վերաբերյալ դատական գործերն սկսվել էին դեռևս 2018 թվականին՝ շարունակվելով հաշվետու ժամանահակատվածում⁴⁹: Ըստ Հայկական բնապահպանական ճակատ (ՀԲՃ) քաղաքացիական նախաձեռնության 2019 թ. մայիսի 24-ին հրավիրված «ՀՀ դատական համակարգը և Ամուլսարի խնդիրը» ասուլիս-քննարկման⁵⁰ ընթացքում ներկայացված տվյալների՝ 2018 թվականի հունիսից սկսած «Լիդիան Արմենիա» ընկերությունը⁵¹ ինը քաղաքացիական հայցերով դիմել է դատարան, որոնցից ութը՝ զրպարտության, ինչպես նաև ընկերության գործարար համբավն արատավորող արտահայտությունների համար: Նշված քաղաքացիական հայցերը ներկայացվել են ինչպես բնապահպան-ակտիվիստների, այնպես էլ Ջերմուկ քաղաքի բնակիչների դեմ, մասնավորապես՝ Լևոն Գալստյան, Անի Խաչատրյան, Թեմմինե Ենոքյան, Հայկ Գրիգորյան, Սերգեյ Բագրատյան, Նազելի Վարդանյան, Շիրակ Բունիաթյան և Էդմոն Աղաբեկյան: Ի դեպ՝ խոսքը գնում է ոչ միայն հրապարակային ելույթներում, այլև ֆեյսբուքյան անձնական էջերում բնապահպանների և տեղի բնակիչների կողմից արված արտահայտությունների ու կատարված գրառումների մասին: Նշված ութ հայցերից յուրաքանչյուրով ներկայացված է մեկ միլիոն ՀՀ դրամի փոխհատուցման, ինչպես նաև հերքում տալու վերաբերյալ պահանջներ: Բացի այդ՝ որոշ դեպքերում կիրառվել են նաև հայցի ապահովման միջոցներ, այն է՝ ընկերության դեմ ուղղված զրպարտություն պարունակող տեղեկության տարածման սահմանափակում, ինչպես նաև կալանք՝ հաշիվների ու գույքի վրա:

Բացի նշված ութ հայցերից՝ Լիդիան Արմենիայի կողմից ներկայացվել է մեկ կոլեկտիվ հայց՝ 28 քաղաքացիների դեմ, այդ թվում՝ բնապահպան Թեմմինե Ենոքյանի՝ 80.000 ԱՄՆ դոլարի չափով վնասի հատուցման պահանջով, հայցադիմումը վերադարձվել է՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու և սահմանված ժամկետում թույլ տրված թերությունները չվերացնելու հիմքով⁵²:

Անդրադառնալով հատկապես զրպարտության գործերին՝ ՀԲՃ քաղաքացիական նախաձեռնության անդամ Աննա Շահնազարյանը նշում է, որ դրանք բնապահպանների ծավալած գործունեության համատեքստում գնահատվում են որպես ոտնձգություն բնապահպան-ակտիվիստների խոսքի ազատության դեմ: Ավելին՝ բանախոսը դրանք որակում է որպես հետապնդում բնապահպանների նկատմամբ հատկապես նկատի ունենալով ՀՀ դատական համակարգի ներկայիս վիճակը (ոչ անաչառ և ոչ օբյեկտիվ լինելը՝ իմր): Բնապահպան Լևոն Գալստյանի գնահատմամբ էլ՝ նշված զրպարտության գործերն իրենց նկատմամբ հոգեբանական ճնշման միջոց են. դրանք խլում են իրենց ժամանակը, իսկ դատական պաշտպանության համար ֆինանսական միջոցների բացակայությունը բնապահպան-ակտիվիստներին դնում է Էլ ավելի դժվար կացության մեջ^{53, 54}:

Դատական գործերից բացի, բնապահպան-ակտիվիստները հետապնդվում են նաև առցանց տիրույթում: Անդրադառնալով կեղծ օգտահաշիվներին և էջերին՝ բնապահպան Լևոն Գալստյանը նշում է, որ այդ խնդրին բախվել են 2018 թվականի մայիսից սկսած, երբ նոր ստեղծված և նույնականացման ոչ ենթակա օգտահաշիվներով ու էջերով սկսվեց կեղծ և զրպարտչական տեղեկություններ տարածվել Ամուլսարի պահապանների և ակտիվիստների դեմ: Նմանատիպ

օգտահաշիվներով և էջերով հատկապես տարածվում են կեղծ տեղեկություններ պարունակող տեսանյութեր՝ «փորձելով սևացնել Ամուլսարի շահագործման դեմ բնապահպանների պայքարը»⁵⁵:

4.1. Ապօրինի ոտնձգություն բնապահպան-իրավապաշտպան Աննա Շահնազարյանի դեմ

2019 թվականի առաջին կեսի առավել խնդրահարույց դեպքերից Էր ՀԲԾ քաղաքացիական նախաձեռնության անդամ, բնապահպան-իրավապաշտպան Աննա Շահնազարյանին ոստիկանության բաժանմունք բերման ենթարկելը: Շահնազարյանը բերման է ենթարկվել 2019 թ. հուլիսի 6-ին՝ Ամուլսարի պահպանների համար իրականացվող դրամահավաքի վայրից՝ ոստիկանության նշամբ խարդախություն կատարելու հիմքով: Ինչպես երևում է ՀԲԾ-ի տարածած տեսագրությունից, Շահնազարյանին բերման ենթարկելիս ոստիկանները չեն ներկայացնում իրենց պահանջի օրինական հիմքերը⁵⁶:

2019 թ. հուլիսի 7-ին տարածված հայտարարության մեջ ՀԲԾ-ն ոստիկանության գործողությունները որակեց ապօրինի՝ նշելով, որ իրենք հետամուտ են լինելուն, որպեսզի «բնապահպանների՝ օրենքով չարգելված գործունեության նկատմամբ այս կոպիտ միջամտությունը պատժվի»⁵⁷: Ի հիմնավորումն ասվածի՝ ՀԲԾ-ն նշում է, որ որպես քաղաքացիական նախաձեռնություն՝ նման գործունեությունն իրենց համար օրենքով արգելված չէ: Ավելին՝ իրենց ողջ գործունեությունը եղել է հրապարակային և թափանցիկ, բնապահպանական միջոցառումները և իրավունքի պաշտպանությունն իրականացրել են որպես կամավորներ, իսկ դրամահավաքը կազմակերպել են Ամուլսարի պաշտպաններին փոխանցելու նպատակով⁵⁸:

Տեղի ունեցածի վերաբերյալ 07.07.2019 թ. պարզաբանում ներկայացրեց նաև ՀՀ ոստիկանությունը: Պարզաբանման մեջ, մասնավորապես, ասվում է, թե Աննա Շահնազարյանը, ներկայանալով որպես դրամահավաքը նախաձեռնող, չի ներկայացրել որևէ փաստաթուղթ կամ թույլտվություն, ուստի խարդախության կասկածանքով ներկայացվել է ոստիկանության Կենտրոնական բաժին⁵⁹:

Տեղի ունեցածն առաջ բերեց քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների դժգոհությունը, միջադեպը լայնորեն քննարկվեց Ֆեյսբուք սոցիալական ցանցում: Ոստիկանության գործողությունների օրինական և համաչափ լինելու խնդրին անդրադարձան նաև պետական պաշտոնյաներ: Այսպես՝ իր 08.07.2019 թ. Ֆեյսբուքյան գրառման մեջ ՀՀ ԱԺ փոխխոսնակ Լենա Նազարյանը («Իմ քայլը» դաշինք), կասկածի տակ առնելով հնարավոր խարդախության առկայության, ինչպես նաև փաստաթղթեր ու թույլտվություններ ներկայացնելու պահանջի վերաբերյալ հիմնավորումները, նշում է. «Տարակուսում եմ, թե ինչո՞ւ ոստիկանությունում այս հանրահայտ իրողությունն ընկալելի չէ և ինչո՞ւ են քաղաքացիները տարվում ու պահվում օրենքով չարգելված գործունեության համար»⁶⁰:

Ոստիկանության բաժանմունքից դուրս գալուց հետո Աննա Շահնազարյանը, Ֆեյսբուքյան ուղիղ եթերով ներկայացնելով պատահածի մանրամասները, հայտնեց, որ իրեն ոստիկանությունում պահել են երեք ժամ ասելով, որ ոստիկանությունում է խոշոր չափերով խարդախության կասկածանքով (ՀՀ քրեական օրենսգիրք 178-րդ հոդվածի 2-րդ մաս՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի հափշտակությունը կամ ուրիշի գույքի

Նկատմամբ իրավունք ձեռք բերելը, որը կատարվել է խոշոր չափերով՝ իմը): Ինքը հրաժարվել է բացատրություն տալուց, քանի որ ստեղծված իրադրությունն իր համար անհասկանալի է եղել: Ըստ բնապահպանի՝ հատկապես խնդրահարույց է այն, որ իրեն բերման ենթարկելիս չեն ներկայացվել բերման ենթարկելու պատճառները: Չնայած ոստիկանության այն հավաստիացումներին, որ իրեն ոչ թե բերման են ենթակել, այլ ընդամենը ներկայացրել են ոստիկանություն, բնապահպանի գնահատմամբ՝ տեղի ունեցածն իր իրավունքների լուրջ խախտում է, և համապատասխան հետևանքները կհաջորդեն: Նշելով, որ նախկինում ևս ՀԲԾ-ի և անձամբ իր կողմից կազմակերպվել են նման դրամահավաքներ և հանգանակված գումարը փոխանցվել է Ամուլսարի պահպանությամբ զբաղվող անձանց՝ առանց որևէ կասկած հարուցելու, բնապահպանը նշում է, որ դա թերևս ցույց է տալիս, որ իրենց գործունեության նկատմամբ պետական մարմինների շրջանում թյուրըմբուռնում կա⁶¹:

Նշված դեպքի առնչությամբ, ինչպես հայտնի դարձավ Արտակ Կիրակոսյանի (Քաղաքացիական հասարակության ինստիտուտ) 27.08.2019 թ. ֆեյսբուքյան գրառումից, դրամահավաքի անցկացմանը խոչընդոտած և Աննա Շահնազարյանին՝ առանց բավարար հիմքերի ոստիկանական բաժանմունք ներկայացրած ոստիկանները ենթարկվել են կարգապահական տույժի՝ իրենց գործառնությանի պարտականությունների կատարման մեջ թերանալու հիմքով⁶²:

Կարևորելով բնապահպան-ակտիվիստների ազատ գործունեության համար նպաստավոր պայմանների ապահովման անհրաժեշտությունը՝ Մարդու իրավունքների տուն Երևանը ՀՀ իրավասու մարմիններին կոչ է անում.

- **երաշխավորել բնապահպան-ակտիվիստների մասնակցությամբ դատական գործերի ու վարչական վարույթների անաչառ ու օբյեկտիվ քննությունը՝ բացառելով որևէ միջամտություն պետական կամ մասնավոր որևէ շրջանակների կողմից,**
- **ձեռնպահ մնալ բնապահպան-ակտիվիստների գործունեությանը, այդ թվում՝ հավաքների ազատությանը և օրենքով չարգելված ցանկացած այլ ձևերով ինքնակազմակերպմանը ոչ իրավաչափ ցանկացած միջամտությունից, իսկ նման միջամտության դեպքում իրականացնել պատշաճ քննություն՝ մեղավոր անձանց պարզելու և պատասխանատվության կանչելու ուղղությամբ,**
- **նպաստավոր պայմաններ ստեղծել բնապահպան-ակտիվիստների ազատ գործունեության համար, պետական քաղաքականություն մշակելիս և վարչարարություն իրականացնելիս հնարավորինս ապահովել բնապահպան-ակտիվիստների մասնակցությունը՝ թափանցիկության, հրապարակայնության, հաշվետվողականության ու հանրային վերահսկողության ապահովման նպատակով:**

5. Ատելություն խոսք և սպառնալիքներ՝ ուղղված փաստաբանների դեմ

Փաստաբանների դեմ հատկապես 2018-2019 թվականներին արձանագրվեցին ատելության խոսքի, թշնամական վերաբերմունքի, ճշունմների, սպառնալիքների ու վիրավորանքի աճ, ինչին Մարդու իրավունքների տուն Երևանն անդրադարձել է 2018 թվականի իր տարեկան զեկույցում⁶³: Թիրախում հատկապես հանրային նշանակության գործերով պաշտպանություն իրականացնող փաստաբաններն են, մասնավորապես՝ ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր, ԵԿՄ նախկին նախագահ Մանվել Գրիգորյանի պաշտպաններից Արսեն Մկրտչյանը, ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի պաշտպաններից Հայկ Ալումյանը և այլք: Եթե նախկինում փաստաբանների թիրախավորումը հիմնականում առցանց տիրույթում էր, 2019 թվականի սկզբներին արդեն արձանագրվեցին փաստաբանին (Արսեն Մկրտչյան) իրական կյանքում հետապնդման ենթարկելու, նրա տեղաշարժի ազատությունը սահմանափակելու և գույքին վնաս հասցնելու դեպք: Վերստին առաջարկվեց քրեական պատասխանատվություն նախատեսել փաստաբանին զրպարտելու, վիրավորանք հասցնելու, նրա նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու, ինչպես նաև նրա ընտանիքի անդամին սպառնալու համար⁶⁴: Օրենքի նախագիծը, սակայն, չընդունվեց, ինչը թերևս կարելի է բացատրել նրանով, որ առանձին խմբերի նկատմամբ վիրավորանքի քրեականացումը վերջին հաշվով կհանգեցներ ընդհանրապես վիրավորանքի քրեականացմանը՝ ողջ ծավալով:

5.1. Փաստաբան Արսեն Մկրտչյանի նկատմամբ ճշունմները, գործունությունը խոչընդոտելու ու վիրավորանք հասցնելու դեպքերը

Դեպքը տեղի է ունեցել 2019 թ. հունվարի 11-ին, երբ Մանվել Գրիգորյանի գործով հերթական նիստից հետո շենքի մոտ հավաքված ցուցարարները փակել էին փաստաբան Արսեն Մկրտչյանի մեքենայի ճանապարհը՝ փաստաբանին թույլ չտալով հեռանալ տարածքից: Մի քանի ոստիկանների օգնությամբ Արսեն Մկրտչյանին, այնուամենայնիվ, հաջողվել էր հեռանալ նշված տարածքից: Ցուցարարներն, սակայն, հասցրել էին ներկանյութ լցնել մեքենայի վրա, իսկ հետո էլ թքել դրա ուղղությամբ՝ փաստաբանի՝ դեկին եղած ժամանակ⁶⁵: Նշված միջադեպը, մասնավորապես, պայմանավորված էր դեռևս 2018 թ. դեկտեմբերի 21-ին Մանվել Գրիգորյանին գրավի դիմաց կալանքից ազատ արձակելու փաստով, ինչն առաջացրել էր հասարակության որոշ հատվածի խիստ դժգոհությունը:

2019 թ. հունվարի 14-ին ՀՀ փաստաբանների պալատում նշված դեպքի քննարկման կապակցությամբ իրավիրվել էր ակումբի նիստ, որով փաստաբանները իրենց մտահոգությունն էին հայտնում իրենց գործընկեր-փաստաբանների անվտանգության վերաբերյալ⁶⁶: Փաստաբանների գնահատմամբ տեղի ունեցածը սպառնալիք է արդարադատության հանդեպ⁶⁷: Փաստաբանների պալատի նախագահ Արա Չոիրաբյանը, մասնավորապես, անդրադառնալով նշված խնդրին՝ նշում է. «Մեզ հատկապես անհանգստացնում է այն փաստը, որ վիրավորանքներից անցում են կատարել գործողությունների: Մասնավորապես՝ թքել են փաստաբանի մեքենայի վրա: Եթե մենք չարձագանքենք, ապա, հնարավոր է, հաջորդը լինի փաստաբանների դեմ բռնություն գործադրելը»⁶⁸: Մանվել Գրիգորյանի գործով մյուս պաշտպան Լևոն Բաղդասարյանը նույն օրը՝ հունվարի 14-ին, իրավիրված մամուլի ասուլիսում գործընկերոջ հանդեպ տեղի ունեցածը որակեց որպես ուղղակի միջամտություն նրա

փաստաբանական գործունեությանը⁶⁹:

Փաստաբան Արսեն Մկրտչյանը, տեղի ունեցածը որակելով որպես արդարադատության դեմ ուղղված գործողություն, այդուհանդերձ հրաժարվեց նշված անձանց պատասխանատվության կանչելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելուց, ինչպես ինքն է նշում, փորձել է չտրվել սադրանքներին⁷⁰: Մեզ հետ զրույցում փաստաբանը, մասնավորապես, հայտնեց, որ իր դեմ ուղղված ատելության ալիքը պայմանավորված է իր և իր վստահորդի նույնացմամբ: Փաստաբանը նշեց նաև, որ այդ օրերին, ի աջակցություն իրեն, շատ հայտարարություններ են եղել՝ դրանցից հատկապես առանձնացնելով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթը: Ավելացրեց նաև, որ իրեն սպառնացող և իր գույքին՝ մեքենային, վնաս հասցրած ցուցարարը վարչապետի նշված ելույթից հետո ներողություն է խնդրել իրենից: Նշենք, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, խոսելով փաստաբաններին իրենց պաշտպանյալների հետ նույնացնելու անթույլատրելիության մասին, ընդգծել էր փաստաբանների դերի կարևորությունը արդարադատության կայացման գործում⁷¹:

Կարևորելով փաստաբանների կարևոր դերը մարդու իրավունքների պաշտպանության ու արդարադատության կայացման գործում՝ Մարդու իրավունքների տուն Երևանը ՀՀ իրավասու մարմիններին կոչ է անում.

- **միջոցներ ձեռնարկել մարդու իրավունքների պաշտպանության ու արդարադատության կայացման գործում փաստաբանների ունեցած կարևոր դերի ու առաքելության վերաբերյալ իրազեկման ու փաստաբանների հեղինակության բարձրացման ուղղությամբ,**
- **միջոցներ ձեռնարկել փաստաբանների գործունեությանն անհարկի ու ապօրինի միջամտությունը, փաստաբանների պատվի ու արժանապատվության դեմ ուղղված գործողությունները կանխելու, ինչպես նաև նման միջամտությունից ու գործողություններից պաշտպանվելու արդյունավետ մեխանիզմների մշակման ուղղությամբ:**

Հղումներ

1. Տե՛ս «Մենք նաև լեսրի ու բիսեքսուալ կանայք ենք... Աժ-ում ծափահարեցին (տեսանյութ), Lurer.com (2019), <https://lurer.com/?p=314691&l=am>:
2. Տե՛ս «Ոստիկանությունը փնտրում է Լարա Ահարոնյանին սպառնացողներին», Infocom.am (2019), <http://infocom.am/?p=730&l=am/>:
3. Տե՛ս «Իրենք փորձում են քեզ ոչնչացնել որպես կին, որ դու հայ կին չես, լավ մայր չես, փորձում են կանել ընտանիքիդ»։ Լարա Ահարոնյան, Aravot.am (2019), <https://www.aravot.am/2019/03/26/1031369/>:
4. Տե՛ս «Հայաստանում իրավապաշտպաններն էլ պաշտպանության կարիք ունեն», Epress.am (2019), <https://epress.am/2019/03/18/Հայաստանում-իրավապաշտպաններն-Էլ-պաշ.html>:
5. Տե՛ս Լարա Ահարոնյանը դատի է տվել լրատվամիջոցներին, Henaran.am (2019), <http://henaran.am/423988.html>:
6. Հայտարարության ամբողջական տեքստի համար տե՛ս, <http://coalitionagainstviolence.org/hy/6843/>:
7. Նույն տեղում:
8. Տե՛ս «Իմ մարմինն անձնական է» գիրքը սկանդալի առիթ է դարձել, Azatutyun.am (2019), <https://www.azatutyun.am/a/29924856.html>:
9. Տե՛ս Չարուհի Բաթոյանի ֆեյսբուքյան էջը, <https://www.facebook.com/zaruhibatoyan/posts/2312962335426729>:
10. Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ամբողջական ելույթի համար տե՛ս «Նիկոլ Փաշինյանն ընթերցել է աղմկահարույց «Իմ մարմինն անձնական է» գիրքը, գոհ է ՀԿ-ի աշխատանքից» (2019), <https://www.youtube.com/watch?v=G-KToRxxG9Y>:
11. Հայտարարության ամբողջական տեքստի համար տե՛ս, <https://www.facebook.com/notes/womens-resource-center-armenia-կանանց-ռեսուրսային-կենտրոն/հայտարարություն-սեռական-բռնության-ճգնաժամային-կենտրոնի-միջոցառման-խափանման-մասին/2608812765856802/>:
12. Տե՛ս «Կհանդիպենք Միերի արդարացման դատավճռի օրը. Չարուհի Մեջլումյան», Aysor.am (2019), <https://www.aysor.am/am/news/2019/02/02/Չարուհի-Մեջլումյան/1521324>:
13. Չարուհի Մեջլումյանի հարցազրույցի տեսանյութն ամբողջությամբ տե՛ս, <https://media.am/zaruhi-mejlumyan-in-the-library>:
14. Արցախյան պատերազմի մասնակից, 2-րդ կարգի հաշմանդամ, հետախույզ Սողոմոն Քոչարյանը 1995թ. դատապարտվել էր մահապատժի: Նա մեղադրվում էր պարսկահպատակ ադրբեջանցու` Իրաջ Փուր Միրզա-Բեկի սպանության մեջ, ավելի մանրամասն տե՛ս, <https://hetq.am/hy/article/54439>:
15. Տե՛ս «Ես հիմա քայլում եմ փողոցով ու չգիտեմ տեղ կհասնեմ, թե՛ ոչ. Չարուհի Մեջլումյան», Iravaban.net (2019), <https://iravaban.net/214262.html>:
16. Հայտարարության ամբողջական տեքստը տե՛ս <https://www.aravot.am/2019/01/14/1009156/>:
17. Նույն տեղում:
18. Ավելի մանրամասն տե՛ս «Այս տարի արձանագրվել է խտրականությամբ զուգորդված ՍԿԳԻ հիմքով դեպքերի աճ», «Փինք» իրավապաշտպան ՀԿ (2019), <http://www>.

pinkarmenia.org/news/discrimination-cases/:

19. Տե՛ս Մարդու իրավունքների տուն Երևանի 2018 թվականի տարեկան գեկույցը, https://issuu.com/humanrightshouseyerevan/docs/hrh_annual_report_2018:
20. Լիլիթ Մարտիրոսյանի ամբողջական ելույթի համար տե՛ս հետևյալ հղմամբ. https://www.youtube.com/watch?v=KaWfXaE3_WQ:
21. Նույն տեղում:
22. Տեսակյութի համար տե՛ս հետևյալ հղմամբ. <https://yelaket.am/?p=49829&l=am>:
23. Տե՛ս «Երկրապահը պետք է հետևի նման կեղտերին վերացնելու գործին. Խանդոյանը՝ ԼԳԲՏ թեմայի մասին», Analitik.am (2019), <https://analitik.am/news/view/470183>:
24. Տե՛ս Նյուլթն ամբողջությամբ՝ հետևյալ հղմամբ. <https://irakanum.am/2019/04/08/վարդան-դուկասյան-առաջարկում-է-այրել/>:
25. Տե՛ս Նյուլթն ամբողջությամբ՝ հետևյալ հղմամբ. <https://www.youtube.com/watch?v=Rqolr-lcccg>:
26. Տե՛ս Նյուլթն ամբողջությամբ՝ հետևյալ հղմամբ. <https://factor.am/139643.html>:
27. Տե՛ս Նյուլթն ամբողջությամբ՝ հետևյալ հղմամբ. <https://www.facebook.com/watch/?v=599292107201479>:
28. Տե՛ս տեսակյութն ամբողջությամբ՝ հետևյալ հղմամբ. <http://www.newsday.am/տրամաբանական-է-զայրույթը-իմ-քայլի-պ/>:
29. Տե՛ս Մարինա Խաչատրյանի ֆեյսբուքյան էջը, <https://www.facebook.com/marina.khachatryan.372/posts/1267501110067899>:
30. Տե՛ս Նյուլթն ամբողջությամբ՝ հետևյալ հղմամբ. <https://factor.am/139669.html>: Տե՛ս նաև, <https://factor.am/139718.html>:
31. Տե՛ս Նյուլթն ամբողջությամբ՝ հետևյալ հղմամբ. <http://www.panarmenian.net/m/arm/news/267490>:
32. Տե՛ս Նյուլթն ամբողջությամբ՝ հետևյալ հղմամբ. <https://factor.am/141114.html>:
33. Տե՛ս Նյուլթն ամբողջությամբ՝ հետևյալ հղմամբ. <https://www.azatutyun.am/a/29870459.html>:
34. Նույն տեղում:
35. Հայտարարության ամբողջական տեքստի համար տե՛ս, <http://www.un.am/hy/news/845>:
36. Տե՛ս տեքստն ամբողջությամբ, https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2019/04/10/comment_spokesperson/9362:
37. Նույն տեղում:
38. Նույն տեղում:
39. Տե՛ս տեսակյութն ամբողջությամբ՝ հետևյալ հղմամբ. <https://www.facebook.com/azatutyun/videos/587530755070962/?v=587530755070962>:
40. Տե՛ս «ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելություն հարուցելը հանցանք է», <https://www.pinkarmenia.org/news/hatred-crime/>:
41. Տե՛ս «Սորոսի քննադատ Հայկ Բաբուխանյանը Սորոսի դրամաշնորհ է ստացել», Civilnet (2019), <https://www.civilnet.am/news/2019/03/18/Սորոսի-քննադատ-Հայկ-Բաբուխանյանը-Սորոսի-դրամաշնորհ-է-ստացել/356769>:
42. Տե՛ս «Արա Բաբլոյան, Բաբուխանյան, Կոստանյան, Բեքարյան». Սորոսի հիմնադրամը ներկայացրեց գումար ստացած նախկին պատգամավորներին», Ipress.am (2019), <https://>

ipress.am/archives/10106:

43. Տե՛ս Հայկ Այվազյանի ֆեյսբուքյան էջը՝ <https://www.facebook.com/hayk.ayvazyan77/posts/2006165576160327>:
44. Հայտարարության ամբողջական տեքստի համար տե՛ս, <http://www.osf.am/2019/03/open-society-foundations-armenia-statement-on-recent-events/?lang=am>:
45. Հայտարարության ամբողջական տեքստի համար տե՛ս, <http://www.osf.am/2019/05/statement-on-the-recent-false-allegations-against-open-society-foundations-armenia/?lang=am>:
46. Նույն տեղում:
47. Տե՛ս «Ոչ բազմամարդ ակցիայի մասնակիցները պահանջում են փակել Սորոսի գրասենյակը, որը միտված է քանդել Հայաստանը», ArmeniaSputnik.am (2019), <https://armeniasputnik.am/armenia/20190603/18946725/qashqshuk-akciayi-masnacicneri-u-vostikanutyam-mijev-sorosi-gtrasenyaki-mot-hanrahavaqe.html>: Նույն օրվա ցույցի մասին տե՛ս նաև Նյու Յորքի ըստ Panorama.am-ի, <https://www.panorama.am/am/news/2019/06/03/Նարեկ-Մալյան/2123241>:
48. Հայտարարության ամբողջական տեքստի համար տե՛ս, <https://www.civilnet.am/news/2019/06/05/66-կազմակերպություն-ի-պաշտպանություն-Բաց-Հասարակության-Հիմնադրամներին/362109>:
49. Տե՛ս Մարդու իրավունքների տուն Երևանի 2018 թվականի տարեկան զեկույցը, https://issuu.com/humanrightshouseyerevan/docs/hrh_annual_report_2018:
50. Ասուլիսն ամբողջությամբ տե՛ս, <https://www.facebook.com/armecofront/videos/341094046590967/>:
51. Լրիվ անվանումը՝ «Լիդիան Արմենիա» երկրաբանահետախուզական ընկերություն:
52. Տե՛ս Datalex.am դատական տեղեկատվական համակարգում:
53. Ավելի մանրիմասն տե՛ս ասուլիսը՝ նշված հղմամբ:
54. Նշված քաղաքացիական գործերից բացի, առկա են նաև վարչական գործեր, որոնցից հատկապես հատկանշական է Լիդիան Արմենիայի ներկայացրած երկու հայցերը՝ ՀՀ ոստիկանության դեմ, որոնցից մեկով արդեն իսկ առկա օրինական ուժի մեջ մտած վճիռ, որով դատարանը ՀՀ ոստիկանությանը պարտավորեցրել է Ամուլսարի ճանապարհները շրջափակած անձանց դեմ քրեական գործ հարուցել՝ ՀՀ քրեական օրենսգրքի խուլիգանության և ինքնիրավչության հոդվածներով նախատեսված հանցակազմերի հատկանիշներով: Ավելի մանրամասն տե՛ս <https://www.lydianarmenia.am/index.php?m=newsOne&lang=arm&nid=220>:
55. Լևոն Գալստյանը նաև հետաքրքիր դիտարկում է անում նշելով, որ իր դեմ նման տեղեկություն տարածող էջերից մեկի ուսումնասիրությամբ պարզ է դարձել, որ նույն անձը ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի աջակից է: Ավելի մանրիմասն տե՛ս ասուլիսը՝ նշված հղմամբ:
56. Տեսանյութն ամբողջությամբ տե՛ս, <https://www.facebook.com/watch/?v=348943299108096>:
57. Հայտարարության ամբողջական տեքստի համար տե՛ս, <https://www.facebook.com/armecofront/photos/a.581249625248439/3082976508409059/>:
58. Նույն տեղում:
59. ՀՀ ոստիկանության պարզաբանման ամբողջական տեքստի համար տե՛ս, <https://www.facebook.com/www.police.am/posts/2477011378985777>:

60. Լենա Նազարյանի ֆեյսբուքյան գրառումն ամբողջությամբ տե՛ս, <https://www.facebook.com/lena.nazaryan.5/posts/2615243445173540>:
61. Տեսանյութն ամբողջությամբ տե՛ս, <https://www.facebook.com/armecofront/videos/719030688548985/>:
62. Գրառմանը կից Կիրակոսյանը ներկայացրել էր ոստիկանության Երևան քաղաքի վարչության պետի տեղակալի իրեն հասցեագրված 09.08.2019 թ. գրությունը՝ ի պատասխան իր կողմից ավելի վաղ ներկայացված բաց նամակի, տե՛ս Արտակ Կիրակոսյանի ֆեյսբուքյան էջը՝ հետևյալ հղմամբ. <https://www.facebook.com/artak.kirakosyan.92>:
63. Տե՛ս Մարդու իրավունքների տուն Երևանի 2018 թվականի տարեկան զեկույցը, https://issuu.com/humanrightshouseyerevan/docs/hrh_annual_report_2018:
64. Օրենսդրական նախաձեռնության վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս <http://advocates.am/news/view/2282.html>:
65. Ավելի մանրամասն տե՛ս <https://armeniasputnik.am/society/20190114/16750981/manvel-grigoryani-pastabani-het-kapvac-mijadepy-anynduneli-e.html>: Տե՛ս նաև <https://www.aravot.am/2019/01/14/1008885/>:
66. Տե՛ս «Փաստաբանների պալատի ղեկավարը և Մանվել Գրիգորյանի պաշտպանն անընդունելի են համարում դատարանի և փաստաբանների վրա ճնշումները», Armeniasputnik.am (2019), <https://armeniasputnik.am/society/20190114/16750981/manvel-grigoryani-pastabani-het-kapvac-mijadepy-anynduneli-e.html>:
67. Նույն տեղում:
68. Նույն տեղում:
69. Տե՛ս «Թքելով փաստաբանի մեքենայի վրա՝ ցուցարարը թքեց ՀՀ իշխանության վրա». Մանվել Գրիգորյանի պաշտպան (2019), Aravot.am, <https://www.aravot.am/2019/01/14/1008885/>:
70. Նույն տեղում:
71. Ելույթին մանրամասն անդրադարել ենք մեր 2018 թվականի տարեկան զեկույցում, https://issuu.com/humanrightshouseyerevan/docs/hrh_annual_report_2018:



**Մարդու
իրավունքների
Տուն**
Երևան

**Կայք՝
Սոցիալական ցանց՝**

**<https://www.hrhyerevan.org>
<https://www.facebook.com/HRHYerevan>
<https://www.instagram.com/HRHYerevan>**

**Հեռ.՝
Էլ. հասցե՝
Հասցե՝**

**+374 10 329032
info@hrhyerevan.org
Հովսեփ Էմին 119/2, Երևան 0012, Հայաստան**